



16.10.2012

Այսօր «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան է այցելել «Այանս ֆրանսեզ»-ի գլխավոր քարտուղար Ժան-Կլոդ Ժակը՝ ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանության Մշակույթի և համագործակցության հարցերով խորհրդական Ժան-Միշել Գասպարյանի ուղեկցությամբ:

Ծանոթանալով թանգարանի մշտական ցուցադրությանը պատվավոր հյուրը թողել է հետևյալ գրառումը. «  
Մեր այցելությունը թանգարանում և արգելոցի տարածքում շատ հարուստ էր հնագիտական հուշարձաններով, որոնք ցույց են տալիս Հայաստանի հնագույն պատմությունը և մշակույթը: Մենք հարգում ենք Ձեր աշխատանքը և հույսով ենք սպասում, որ այս համագործակցությունը կընթացի և կապահովի մեր երկրների միջև մշակութային կապերի զարգացումը:»

Հյուրերը դիտել են նաև վերջին օրերին թանգարանում բացված «Ճանապարհ. Էրեբունին երեկ և այսօր» ժամանակավոր ցուցահանդեսը, որը ներկայացնում է Էրեբունի քաղաք-ամրոցի բացահայտման գիտական ճանապարհը՝ 50-ականներից մինչև հայ-ֆրանսիական համագործակցություն: Այցելությունն ավարտվել է Արին բերդ բլրին

պահպանված էրեբունի անրոցի միջնաբերդում շրջայցով:

«Պատմություն» Գրականության և Գեղարվեստի Միջնաբերդում